

## ԱՂՕԹՔ Ա. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼԷ ԵՏՔ

Դու՛ն, որ մեր տկար բնութեան փորձառութիւնը ունեցար, ո՛վ մեր Քահանայապետը՝ Յիսուս, քեզի՛ կը նայինք: Դու՛ն՝ որ մեզի համար մեղքի պատարագ եղար, որպէսզի մենք քեզի համար արդար ըլլանք: Դու՛ն՝ որ մեզի համար երկրաւոր եղար, որպէսզի մենք քեզի համար երկնաւոր ըլլանք: Դու՛ն՝ որ մեզի համար Հաց եղար, որպէսզի մենք քեզ ճաշակելով սրբուինք: Տո՛ւր վիշտերով լեցուն քու Մարմինդ, որպէսզի բոլոր սիրտերը քեզ ճաշակեն եւ սրբուին: Մատռուակէ՛ վրակի պէս կաթկթող քու անմեղ Արիւնդ, որպէսզի մարդիկ անմեղութեամբ յագենան: Երկարէ՛ փրկական խաչդ՝ այս աշխարհի ծովուն մէջ լողացողներու, մեզ վեր՝ դէպի քեզ բարձրացնելու համար: Շնորհքի՛ կարօտ ենք, սփռէ՛ յոգնած ենք մեղանշելէ, քաւէ՛: Խաւարի մէջ կը խարխափինք, ճառագայթէ՛. մեր հաւատքէն տապալած ենք հաստատէ՛: Դո՛ւն ես յոյսը, դո՛ւն ես լոյսը, դո՛ւն ես կեանքը, դո՛ւն ես քաւութիւնը, դու՛ն ի՛նքդ ես անմահութիւնը: Քեզի՛ կը սպասենք, քու շնորհքիդ կռթնածներս. քեզմէ՛ փրկութիւն ստանալու կարօտ ենք, քու Մարմինիդ միացածներս. քե՛զ իբրեւ քաւիչ քահանայ ունինք, մենք՝ քու Արիւնովդ գնուած հօտդ: Նայէ՛ բոլորիս, սփոփէ՛ մեր տարակուսանքները քու փրկագործութեամբդ, հանդարտեցո՛ւր մեր խռովութիւնները քու խաղաղութեամբդ, հանգստացո՛ւր մեր յոգնած հոգիները քու օթեւաններուդ մէջ, ուր դու՛ն գացիր, ո՛վ Տէր, եւ նոյնը մեզի խոստացար: Եւ արժանացո՛ւր մեզ՝ քեզի պատկանողներս, որ փառաւորենք քեզ, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին՝ յաւիտեանս: Ամէն:

*Ա. ՆԵՐՍԷՍ ԼԱՍՐՐՈՆԱՅԻ*